

րուն թանձրութեան: Գուցէ Թորթոզի և Ժիպլէի եկեղեցիներուն պէս զրօնն միայն ցցուածք ունէր, պատին թանձրութիւնը կըրկնուած էր կողակներու առջևի գերաններուն անջրպետներուն մէջ:

Հաւանական է որ այս բիւզանդական կողակները շինուած են 1101ի Կեսարիոյ զրաւման և 1187ի նոր տիրապետութեան, մերձաւորապէս ժԲ. դարու կիսուն, ինչպէս Թորթոզի եկեղեցիինը: Գալով ճակատին՝ անոր որմայեցերուն զօրաւոր ցցուածքը կը թուի ցոյց տալ նուազ հին թուական մը, թէպէտ և ժԲ. դարէն սկսեալ երուսաղէմի Ս. Աննայի ճակատին վրայ և Թորթոզի եկեղեցիին մէջ այս տեսակ որմայեցեր կը գտնուէին: Թերեւս եկեղեցիին ճակատը մաս կը կազմէր այն աշխատանքին զոր Կեսարիոյ մէջ կատարեցին Gautier Avesnes 1218ին, կամ Ս. Լուսդովիկոս 1251ին: Եթէ ան կը վերաբերի ժԳ. դարու, կրնայ գիտուիլ թէ ան շատ կը տարբերի Թորթոզի, Աքքեայի և Ֆամակուստայի առանց որմայեցի ճակատներէն:

Ս. Լաւրենտիոսի փոքր եկեղեցին քաղաքին հիւսիսային կողմը կը գտնուէր: Ան ունէր կոնք մը 5.50 մէթր լայն, 1.50 մէթր թանձրութեամբ պատերով, որմայեցերով բռնուած: Այս եկեղեցին՝ որուն երկու գերանամէջերը գոյութիւն ունէին, 4-5 մէթր բարձրութեամբ, սրածե կամարներ ունէր: Հողէն երեք մէթրէն քիչ մը աւելի վեր կար ներքին լար մը, որ կապուած էր կամարի պարանոցները (retombée) կրող ուսերու (consoles) թակաղաղներուն, ինչպէս Ռեմլէի եկեղեցիին կողմնաթեւերուն կամ Աքքեայի եկեղեցիին ստորնայարկ սրահին մէջ: Այս լարին տակ, հիւսիսային կողմը կը բացուէր աղեղնաձև խիստ ցած դուռ մը:

Որմայեցերուն երկու կողման երեսներուն վրայ կը դիտուին աղեղներ՝ որ կրնային ունենալ իրենց բարձրութեան մէջ շինուած անցք մը:

Այս տեղեկութիւններուն համաձայն, կը թուի թէ Ս. Պետրոսի եկեղեցին ժԳ. դարու շինուածք մ'է (Տե՛ս Camille Enlart, les monuments des Croisés de Jérusalem, էջ 85-87):

1101ին երբ Կեսարիա խաչակիրներէն զրաւուեցաւ, անոնց ձեռք բերած աւարին մէջ կը գտնուէր թանկագին սպաս մը, Վերջին ընթրեաց ժամանակ Յիսուսի զործածած բաժակը կամ սկիհը, զոր ձեռնովացիները իբրեւ իրենց աւարի բաժինը նախընտրեցին զայն և տարին յետոյ իրենց հայրենիքը. նոյն սպասը